Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2024–2025 ուսարի)

9-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

ա) Հայոց պատմություն (20 միավոր)

1. Ե՞րբ է տվել իր առաջին արտադրանքը Երևանի արհեստական կաուչուկի գործարանը. 0,5 մ.
   ա) 1930 թ. բ) 1933 թ. գ) 1953 թ. դ) 1940 թ.
2. Ո՞վ է հաջորդել Հայոց գահին Տրդատ I Արշակունուն. 0,5 մ.
   ա) Սանատրուկ բ) Խոսրով I գ) Աշխադար դ) Վաղարշ I
3. Որտե՞ղ է գործել Խաչատուր Կեսարացու հիմնած տպարանը. 0,5 մ.
   ա) Վենետիկ բ) Սբ. Էջմիածին գ) Նոր Ջուղա դ) Կալկաթա
4. Ո՞վ էր կազմել Հայաստանի ազատագրության «Հարավային ծրագիրը». 0,5 մ.
   ա) Հովսեփ Արղության բ) Շահամիր Շահամիրյան գ) Իսրայել Օրի դ) Հովսեփ Էմին
5. Ո՞ր թվականին է տեղի ունեցել Ներսեհապատի ճակատամարտը. 0,5 մ.
   ա) 481 թ. բ) 482 թ. գ) 483 թ. դ) 484 թ.
6. Որչա՞փ ջոկատով է Վ. Մամիконյանը ջախջախել պարսկական բանակին Շամքորի ճակատամարտում. 0,5 մ.
   ա) 2000 բ) 3000 գ) 10000 դ) 5000
7. Ո՞ր գյուղում է հուղարկավորել հայդուկապետ Հրայր Դժոխքին. 0,5 մ.
   ա) Սուլուխ բ) Տալվորիկ գ) Շենիկ դ) Գելիեգուզան
8. Ե՞րբ է ավարտվել Անիի Կաթողիկեի՝ Մայր տաճարի կառուցումը. 0,5 մ.
   ա) 990 թ. բ) 1001 թ. գ) 1020 թ. դ) 977 թ.
9. Ե՞րբ է կազմավորվել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (նշե՛ք թիվը, ամիսը և օրը): 0,5 մ.
10. Հայաստանի ո՞ր մայրաքաղաքն է կառուցվել Մեծամոր և Երասխ (Արաքս) գետերի ջրկիցում: 0,5 մ.
11. Ո՞վ է «Աղվանից աշխարհի պատմություն» աշխատության հեղինակը: 0,5 մ.
12. Որքա՞ն հայ է վերաբնակեցվել Արևելյան Հայաստանում Թուրքմենչայի պայմանագրի կնքման շնորհիվ: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա) Անկախ և Միացյալ Հայաստանի հռչակումը
    բ) Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումը
    գ) Անդրկովկասյան սեյմի լուծարումը
    դ) Սևրի հաշտության պայմանագրի կնքումը
    ե) Թուրք-անդրկովկասյան հաշտության բանակցությունների վերսկսումը Բաթումում
    զ) Հ. Օհանջանյանի բյուրո-կառավարության ստեղծումը
    է) Բաթումի հաշտության պայմանագրի կնքումը
    ը) Առաջին աշխարհամարտի ավարտը
    թ) Հայաստանի խորհրդի առաջին նիստի գումարումը

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. Ժնև 2. Մարսել 3. Փարիզ 4. Մոսկվա 5. Թիֆլիս 6. Մադրաս
    ա. «Մշակ» բ. «Ազդարար» գ. «Արմենիա» դ. «Հնչակ» ե. «Անահիտ» զ. «Հյուսիսափայլ»

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    ա) Խորհրդային Հայաստանում գիտության զարգացման ու գիտական կադրերի պատրաստման գործում կարևոր նշանակություն է ունեցել 1930 թ. ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (Արմֆանի) հիմնումը:
    բ) 1921 թ. Իրաքից Խորհրդային Հայաստան է հայրենադարձվել շուրջ 3000 հայ, և մինչև 1936 թ. մերձավոր-արևելյան ու եվրոպական մի քանի երկրներից, ընդհանուր առմամբ, հայրենադարձների թվաքանակը հասել է շուրջ 42 հազարի:
    գ) 1920 թ. դեկտեմբերին ՀՀ-ում կատարվել է վարչական նոր բաժանում, ստեղծվել են Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունիքի նահանգները:
    դ) 1920 թ. ապրիլի 25-ին արցախահայության 9-րդ համագումարը որոշում է կայացրել Արցախը վերամիավորել Հայաստանի Հանրապետությանը:
    ե) 1922-1923 թթ. կիլիկիահայությունը հերոսական դիմադրություն է ցույց տվել քեմալականներին, և Անտանտի երկրների աջակցությամբ հռչակվել է Կիլիկիայի ինքնավարությունը:

զ) Արտաշատի պայմանագրով Տիգրան Մեծը հօգուտ Հռոմի հրաժարվել է իր նվաճումներից, իսկ Մեծ Հայքը ճանաչվել է «Հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից»:
է) Հայաստանի տարածքում նեոլիթյան նշանավոր հուշարձաններ են Արագածի լանջին գտնվող Արտին լեռան, Արզնիի և Երևանի քարայրներ, Ազոխի քարայր (Արցախում) հնավայրերը:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
ա) Նէպով նախատեսված տնտեսական բարեփոխումների առանցքը պարենմասնատրումն էր, որը վճարվում էր գյուղմթերքներով կամ դրամով:
բ) 1917 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Թուրքահայաստանի մասին» հրովարտակով (դեկրետ) Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ճանաչում էր Արևմտյան Հայաստանում հայերի ինքնորոշման ու անկախ պետություն ստեղծելու իրավունքը:
գ) XVII դ. առաջին կեսին Արևմտյան Հայաստանում լեռնային բերդերը, ամրություններն ու ամրացված շրջանները հայտնի են սղնախներ անվանումով:
դ) Պարսկաստանում քրիստոնյա ամենահարուստ և ազդեցիկ մարդկանց XVIII դարից սկսած շնորհվել է ամիրա պատվանունը:
ե) Միևնույն արհեստով զբաղվող վարպետների միությունը կամ կազմակերպությունը արևմտահայերի մոտ կոչվում էր էսնաֆություն, իսկ արևելահայերի մոտ՝ համքարություն:
զ) Գեղարքունիքի, Ջրաբերդի, Գանձասարի, Վարանդայի ու Դիզակի մելիքություններից կազմված վարչական միավորը, որի կառավարիչն էր Դիզակի մելիք Եգանը, հայտնի է «Խամսայի մելիքություններ» անունով:
է) Ռուսական կայսրության՝ 1844 թ. Թիֆլիս կենտրոնով ստեղծված վարչատարածքային նոր միավոր էր Կովկասի փոխարքայությունը:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա) 1899 թ. գործարկվել է Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղին, իսկ մի քանի տարի անց Ալեքսանդրապոլը երկաթուղով կապվել է Երեւանի հետ:
բ) Բրեստ-Լիտովսկում կնքված պայմանագրով Ռուսաստանը դուրս է եկել Առաջին համաշխարհային պատերազմից:
գ) Խորհրդա-թուրքական 1921 թ. Մոսկվայի, ապա նաև Կարսի պայմանագրերով Նախիջևանը և Սուրմալուն ՀՍԽՀ-ի մաս են կազմել:
դ) Հայ մեծահարուստ Մկրտիչ Սանասարյանի հովանավորությամբ 1881 թ. Նոր Նախիջևանում հիմնվել է նշանավոր Սանասարյան վարժարանը:
ե) Հայ պարբերական մամուլի ուշագրավ օրգաններ են Ա. Չոպանյանի խմբագրությամբ Փարիզում հրատարակված «Անահիտ» և Գ. Լևոնյանի խմբագրությամբ Թիֆլիսում հրատարակված «Գեղարվեստ» հանդեսները:
զ) XIX դարի վերջին տասնամյակներին սկզբնավորվել է հայ կուսակցական մամուլը՝ Հնչակյան կուսակցության օրգան «Հնչակ», Հայ հեղափոխական դաշնակցության պաշտոնական օրգան «Դրոշակ» և այլ պարբերականներով:
է) Հայ տպագրության պատմության մեջ նշանակալի իրադարձություն էր Սիմեոն Երևանցի կաթողիկոսի ջանքերով 1771 թ. Սբ. Էջմիածնում հիմնված տպարանը:
ը) Հայ իրականության մեջ ազատամիտ ուղղության նշանավոր ներկայացուցիչներից էր «Հյուսիսափայլ» ամսագրի խմբագիր և հրատարակիչ Ստեփանոս Նազարյանցը:
թ) 1877 թ. հունիսին թուրքական շուրջ 10-հազարանոց բանակին 23 օր շարունակ հերոսական դիմադրություն են ցույց տվել գեներալ Ա. Տեր-Ղուկասովի գլխավորած Բայազետի ռուսական կայազորն ու շրջակա հայկական գյուղերի բնակչությունը:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ.
Թագավորական իշխանությունն ամրապնդելու նպատակով Հայոց արքա Արշակ II-ը Բագրևանդ գավառում հիմնել է Արշակավան քաղաքը:

Ուղղում. ոչ թե՝ ———————— (նշե՛ք սխալը, 0,5 մ.), այլ՝ ———————— (նշե՛ք ճիշտը, 0,5 մ.):

19. Պատասխանե՛ք լուսանկարում պատկերված հուշարձանի պատմական իրադարձությանը նվիրված հարցերին.

1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա. Ո՞վ էր Արարատյան դաշտի ինքնապաշտպանության ոգին և հաղթանակի կոփման գործում մեծ ներդրում ունեցած գործիչը, որ Երևանի նահանգի դիկտատոր էր հաստատվել:

բ. Ո՞վ էր գլխավորում նորակազմ Երևանյան զորախումբը:

գ. Ո՞ր զորաջոկատի հրամանատարն էր գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանը:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

XVII դարում գրված պատմագրական կարևոր աշխատություններից է …-ու (ո՞ւմ, 1) «Ժամանակագրություն» երկը, որտեղ ներկայացված են … (ո՞ր, 2) կայսրության քաղաքական կացությունը և արևմտահայության կյանքը: … (3) դարի առաջին կեսի իրադարձությունները Հայաստանում առավել մանրամասն շարադրված են Առաքել Դավրիժեցու երկում:

21. Տրամաբանական խնդիր. 1 մ.

Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 6150 տարեկան է, կոնկրետ ո՞ր ժամանակաշրջանի ընթացքում է ստեղծվել (նշե՛ք կոնկրետ անվանումը):

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:

բ. Նրանից հարավ պատմաաշխարհագրական նշանավոր ո՞ր երկրամաս-դաշտավայրն է գտնվում:

23. Ո՞վ է ստորև տրված պատկերում ներկայացված գրքի հրատարակիչը. 0,5 մ.

24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ (պատասխանե՛ք տրված հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր իրադարձության հետևանքով տեղի ունեցող գործընթացներն են ներկայացված 1909 թ. հրատարակված ռուսական ծաղրանկարում /1/:

բ. Ո՞ր նահանգի հայ բնակչության կոտորածն է պատկերված նույն թվականի ֆրանսիական ծաղրանկարում /2/:

1.

2.

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Ո՞ւմ են վերագրվում ստորև մեջբերված խոսքերը. 0,5 մ.

   «Պետք չէ ինձ զիջել այն, ինչ արդեն գրավել եմ զենքով»:

   ա) Հուլիոս Կեսար բ) Ալեքսանդր Մակեդոնացի գ) Կյուրոս Մեծ դ) Մարկոս Ավրելիոս

2. Ո՞վ է կազմակերպել Խաչակրաց 7-րդ և 8-րդ արշավանքները. 0,5 մ.

   ա) Ինոկենտիոս III բ) Լյուդովիկոս IX գ) Ֆրիդրիխ II դ) Ուրբանոս II

3. Ե՞րբ է հռչակվել Չինական Ժողովրդական Հանրապետությունը. 0,5 մ.

   ա) 1945 թ. բ) 1948 թ. գ) 1949 թ. դ) 1955 թ.

4. Ո՞վ է ներքին այրման շարժիչի գյուտարարը. 0,5 մ.

   ա) Գ. Դայմլեր բ) Ջ. Մաքսվել գ) Հ. Ֆորդ դ) Թ. Էդիսոն

5. Ի՞նչ էր կոչվում ԱՄՆ-ում մշակված ծրագիրը, որի համաձայն ԱՄՆ-ն պետք է ֆինանսական օգնություն ցուցաբերեր Երկրորդ աշխարհամարտից տուժած Եվրոպական երկրների տնտեսությունները վերականգնելու և հասարակական ցնցումներից նրանց հետ պահելու համար: 0,5 մ.

6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (5 X 0,2 մ.)

1. Անտիոք	ա. Եգիպտոս
2. Մեմֆիս	բ. Խաթթի
3. Խաթթուսաս	գ. Ասորեստան
4. Պերսեպոլիս	դ. Իրան
5. Նինվե	ե. Սելևկյան տերություն

1	2	3	4	5

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

   ա) Ֆրանկական թագավորության պատմության մեջ Հայկական արքայատոհմի կառավարման ժամանակաշրջանը սովորաբար անվանում են Կարոլինգյան վերածնունդ:

   բ) Սկանդինավյան թերակղզու բնակիչները, որոնց անվանում էին նորմաններ (վիկինգներ), XI-XIII դդ. ձեռնամուխ են եղել նոր տարածքների նվաճմանը:

   գ) Հարյուրամյա պատերազմում տարած հաղթանակի արդյունքում ավարտվել է Ֆրանսիայի քաղաքական միավորումը, և Ֆրանսիան դարձել է Եվրոպայի ամենամեծ ազգային պետությունը:

   դ) Աթենքի ժողովրդավարական կարգերի իրական կերտողը Կլիսթենեսն էր, որն իրականացրել է կարևոր բարեկարգումներ:

   ե) Հռոմում ճգնաժամի հաղթահարման նշանակալի փորձ էր Սուլլայի ձեռնարկած քայլը, երբ նա բանակով գրավել է Հռոմը և երկրում հաստատել պրինցիպատ:

   զ) Հռոմեական կայսրությունն իր ռազմական հզորության գագաթնակետին է հասել կայսր Մարկոս Տրայանոսի գահակալության տարիներին:

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)

   ա. Հին հռոմեական քաղաքակրթության ձևավորման ժամանակ Ապենինյան թերակղզում բնակվող 2 ժողովուրդներ կամ ցեղ(ախմբ)եր,

   բ. Հին Հռոմի արքաներից 2-ին:

9. Աշխատանք քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Միջնադարյան ո՞ր պետությունն է ընդհանուր գունանշված՝ իր ենթակա պետական կազմավորումներով (պարտադիր նշե՛ք պետության պաշտոնական անվանումը):

բ. Ո՞ր թվականին է պետության հիմնադիրների ձեռքն անցել դրա մայրաքաղաքը:

10. Նշանավոր ո՞ր գործիչն է պատկերված որմնանկարում. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական պաստառի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետությունն է խորհրդանշում աջ կողմում պատկերված կինը:

բ. Ի՞նչ ռազմաքաղաքական դաշինք է խորհրդանշում նկարը:

գ. Ո՞ր պետությունն է այդ դաշինքին միացել որպես երրորդ անդամ:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

04.03.2025 թ.